

նա ինքն իրան բառի բուն նշանակութեամբ ամեն ինչից զրկում է արդէս զի մօրաքոյրը պահասութիւն չզգայ և նրանից ծածկում է ստակալի վիճակը— Ը վերջոյ պարոններս ևս ձեզ կ'պատմեմ Միշօ կոյրերի մասին որոնք ի ծնէ կոյր են Երբա ապրում են Շերի գաւառի մի յեա ընկած գիւղումս հարժով ծածկուած մի սորամեղի գիւղի մէջ։ Ամենափոքր հասակից կր ծնօզները աշխատում էին գաշտում սոքա սովորել էին կատարել տանը բոլոր գործերը պարտատում էին ճաշը և ինչպէս բարի յաւերժահարսեր սիրում էին լուանալ մաքրել և կարգի բերել աղքատիկ հիւղը։ Ընտանիքը ապրում էր խաղաղ համարեա բախտաւոր բոյց տաս տարի առաջ մեռաւ հայրը և նոքա մենակ են իրենց հիււանդ մօր հետ։ Հարեան գիւղի տանուտէրը առաջարկել է պառաւին տեղափոխել աղքատանոցում։ աղջիկները ոչ մի պայմանով չեն համաձայնուել և խոստացել են ամեն ինչ աւնել որ մայրը իրենց մօտ մնայ։ Դժուար է հաւատալ այն ամէնին ինչ որ նոքա արել են։ ահագին նեղութիւններով սովորել են մանկէ կարել և լուանալ ամրողջ վիշկները մինչև լոյս աշխատել են։ իսկ մայրը արածայնում էր միակ սյծը որի կաթով նոքա երեքը կերակրում էին։ վերջը պառաւը դարձել է մանկամիտ և գժբախտ կոյրերը միշտ երկիւղի մէջ էին որ նա կարող է հեռուն գնալ և մուրբուիլ։ այժմ նա էլ է կուրացել և այլևս անկողնից չի բարձրանում իսկ խեղճ աղջիկներն էլ աւելի ջանասիրտութեամբ են աշխատում որպէս զի որեւէ կերպ քաղցրացնեն նրա կիանքը որին երբէք չեն տեսել նոքա նորան շատ մաքուր են պահում և գէպի նորան վերարերում են ամենաքնքոյշ հոգատարութեամբ և սրտաշարժ ուշադրութեամբ։ Նոքա երբէք ողորմութիւն չեն խնդրել և ոչ որ նոցանից ոչ մի դանդաղ չէ լսել— հեղութիւնը և բախտին հնազանգուիլը նոցանից միշտ անբաժան է։

«Որտեղից են այս խեղճերը ստանում այդքան կորով և հոգեկան պայծառութիւն։ Փայլուն ժպիտը երբէք չի հեռանում զըժբախտանքի շրթունքներից որոնք իրենց մասնում են ուրիշների համար... իսկ մենք

դարուս առաջնակարգ մարդիկը միշտ թախճում ենք միշտ անբաւական եւք և չենք իմանում որտեղ որոնել մոռացում անընդհատ անյաջողութիւնից։ Մենք մոռացել ենք հաւատի մէջ սիրտանք որոնել այլ ևս չենք կարող յուսալ... Ի՞նչ է մնում մեզ Սեր։ Նա մայն կարող է մեզ փրկել։ Սքանչանալով այդ փոքրներից ամենափոքրիկ հեղութեան և մեծութեան առաջ— այդ հիւանդների կոյրերի խեղանդամների աղքատների և ծերերի ևս խոնարհում եմ նոցա առաջ։ Մենք կարող ենք մեզ օգնել եթէ ըստ չափու կարողութեան փորձենք... փոքր ինչ նմանուել նոցա»

Մեսրոպ վարդապետ

ՕՏԼՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՒՅՍ ԵԿԵՂԵՑԻ

Կրկին մի աչքի ընկող կորուստ ունեցաւ Ռուսաց եկեղեցին։ Եանձին իւր վարչութեան ամենից բարձր ներկայացուցչի Ս. Պետրոբուրգի մեաբապօղոս և ս. Սինոդի նախագահող անդամ Սրբ. Պալլադիոս որ մի քանի շաբաթուայ ծանր հիւանդութիւնից յետոյ դեկտեմբեր 4—5-ին գիշերը կնքեց իւր մահկանացուն։ Սրբ. Պալլադիոս Նիժնիյ—Սովգորօղի թեմի մի հասարակ քահանայի զուակ էր ծնուած 1827 թ. յուլիս 20-ին։ Բարձրագոյն կրթութիւն ստացել է նա Կազանի Հոգևոր Տեմարանում որ մի քանի տարի առաջ էր բացուել և առանձին ուշադրութիւն էր դարձնում՝ եռանդ արձարծելու իւր օաների մէջ գէպի միսիոնարական գործը և նախապատրաստելու այդ գործի համար։ 1852 թ.-ին մեծ յաջողութեամբ աւարտեց նա իւր ուսումը և աստուածաբանութեան մագիստրոսի աստիճան ստանալով ուսուցիչ կարգուեցաւ Նիժնիյ—Սովգորօղի թեմ։ Գարոցի ուր ինքն ուսել էր Այստեղ նա շուտով քահանայ ձեռնադրուեցաւ և աւագ քահանայի աստիճան ունէր ու թեմական գորանոցի տեսչի օգնական էր երբ այրիանալով 1861 թ.-ին կրօնաւորական սքեմ ընդունեց։ Շատ շանցած գործունէութեան ընդարձակ ասպարէզ բացուեցաւ նորա առաջ, մինչ Պետրոբուրգ տեղափոխուելով՝ այնտեղի Հոգևոր դպրանոցի նախ տեսչի օգնական ապա և տեսուչ կարգուեցաւ։ Իսկ 1866 թ.-ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելով իբրև մայրաքաղաքի մետրապոլիտան ամբողի փոխանորդ՝ եռանդուն մասնակցութիւն ու

նեղաւ բարձրագոյն հոգեւոր վարչութեան գործերի մէջ և կարեւոր յանձնարարութիւններ կատարեց: Այնուհետեւ առաջնորդական պաշտօն վարեց նա հետզհետեւ Առաջնորդայի Տամբովի Բնագանի (այստակ աքրեպիսկոպոսական աստիճան ընդունելով) և Կազանի թեմերում: Իսկ 1887 թ.-ին նշանակուեցաւ Արաստանի Էկզարխոս որակեցից և 1892 թ.-ին Ս. Պետերբուրգի մետրապոլտական աթոռի վերայ բարձրացաւ: Բոլոր այս պաշտօնավարութեանց միջոցին Հանգուցեալը բազմակողմանի ծառայութիւններ է մատուցել իւր եկեղեցուն, նպաստել գարուցական գործի յաջողութեանը, հոգեորականների վիճակն ապահովելու համար աշխատել և եկեղեցիներ նորոգել և կառուցել, միսիոնարական և բարեգործական ընկերութիւններ կազմակերպել և եղածներին քաջալերել ևն, հիմնել է ի միջի այլոց «Արաց համալսարան» և «Հոգեւոր համալսարան» Ս. Պետերբուրգի թեմի թերթերը, Հանգուցեալ մետրապոլիտը յայտնի էր իրրե լայն հայեացքների տէր և արդարագորով մարդ, բարեմիտ մանուանդ դեպի օտար եկեղեցեաց ներկայացուցիչները, որպիսի բարեմտութեամբ և ամենասիրալիր պատրաստակամութեամբ ընդունեց նա օր մեր Ա. Ե. համալսարանի հայրապետի այցելութիւնը: — Հանգուցեալի թաղման կարգը տեղի ունեցաւ Ալեքսանդրոս — նեփսկի մայրավանքի աւագ տաճարում, անթիւ հոգեւորականների մասնակցութեամբ և Մեծ իշխան Միքայէլ Նիկոլայի վիչի, Պայտրական տան մի քանի այլ անգամներ և բազմաթիւ բարձրաստիճան անձանց ներկայութեամբ: Իսկ գազաղն ամիսփութեացաւ ինչպէս ինքը կանխաւ ցանկութիւն էր յայտնել, ս. Իսիդորեան տաճարում, Նորա երկու որդիքը, որոնք մայրաքաղաքում բարձր պաշտօններ են վարում (մին՝ Ն. Բանփ, տեսուչ է կանանց բարձրկուրսերի միւսը՝ Ա. Բանփ, բժիշկ մի հիւանդանոցի) ճաշ տուին հազար աղքատների:

Ս Մինոգի կարգադրութեամբ Ս. Պետերբուրգի թեմի գործերն առժամանակ պէտք է վարէր մետրապոլտութեան առաջին փոխանորդ և Հոգեւոր ձեմարանի տեսուչ Բոհանն եպիսկոպոսը:

— Իւր երէց քրոջ բաղդակից եղաւ Բոլգարական եկեղեցիին որի սինոդի նախագահն ևս՝ մետրապոլիտ Գրիգորիյ, վախճանուեցաւ դեկտ. 16-ին, 70 տարեկան հասակում և մարմինը՝ իշխանական զոյգի ներկայութեամբ թաղման կարգը կատարելուց յետոյ, փոխադրուեցաւ 18-ին Բուչչուկ, ուր նա 26 տարի եպիսկոպոսական պաշտօն է վարել: — Բոլգարական եկեղեցւոյ մասին վերջերս լայս տեսած ստատիքական ակնկոյտութիւններից երևում է, որ սա վարչական տեսակետից բաժանուած է 11 թեմերի 60 փոխանորդութիւններով, և իրրե հոգիւ ունի 11 մետրապոլիտներ, 1 եպիսկոպոս 1902 ծխական քահանաներ և 19 սարկաւաք: Բոլոր ծը-

խերի թիւը եղել է 1897 թ.-ին 519, 913: Եկեղեցիներ 1767 և 264 մատուաներ, 175 վանքեր, 215 կրօնաւորներով և 19 կուսանոցներ, 306 կոյսերով, Աչքի է ընկնում այստեղ եկեղ. կեանքի մէջ մանուանդ ամուսնալուծութեանց օր աւուր բաղմանալը, որ անշուշտ հետեանք է զլիսաորակէս եւրոպական քաղաքակրթութեան ազդեցութիւնից յառաջ եկած սխալ տեսութիւնների:

— Պեկտեմեր 25-ին արձակուած Բարձրագոյն հրովարտակներով նորոգ հանգուցեալ Արք. Պալլադիյի փոխանակ ս. Մինոգի նախագահող անդամ նշանակուեցաւ Կիւլի մետրապոլիտ Արք. Իոաննիկիյ, իսկ ս. Պետերբուրգի մետրապոլտական աթոռի վերայ բարձրացաւ Քիւնլանդիայի արքեպիսկոպոս Արք. Անտոնիյ, — Արք. Անտոնիյ, որ զեռ միայն 52 տարեկան է, վերջին տասնեակ ասորինում շատ աչքի ընկնող տեղ էր բռնում ուսուց բարձր հոգեւորականութեան մէջ, նա իւր բարձրագոյն կրթութիւնն ստացել է Կազանի Հոգեւոր ձեմարանում, ուր և իրրե մագիստրոս աւարտելուց յետոյ «Քարոզչութեան պատմութեան» ուսուցչական ամբիոն է գրաւել, Այլտեղ նա ամուսնացել և երկու որդի է ունեցել, բայց յանկարծակի գրեթէ միաժամանակ բոլորին կորցնելով՝ կուսակրօնութիւն է ընդունել 1883 թ.-ին: Նոյն տարին նա ստացել է վարդապետական աստիճան և կարգուել յետոյ Հոգեւոր ձեմարանի տեսչի օգնական, իսկ 1885 թ.-ին նորա գործունէութեան ասպարէզը փոխադրուեցաւ Պետերբուրգ, ուր Հոգեւոր ձեմարանի նախ տեսչի օգնականի ասպ և տեսչի պաշտօն է ստացել, իսկ 1887 թ.-ին եպիսկոպոս ձեռնադրուելով՝ մնացել է մայրաքաղաքում մօտ 20 տարի շարունակ, Այս ժամանակամիջոցում նա առթթ ունեցաւ հարկաւ, մանուանդ իրրե փոխանորդ մետրապոլտութեան, շատ լաւ ծանօթանալու իւր նոր վիճակի գործերի հետ, իսկ 1892 թ.-ից ի վեր, երբ կարգուեցաւ արքեպիսկոպոս Քիւնլանդիոյ և անգամ ս. սինոդի եկեղեցւոյ բարձրագոյն վարչութեան մէջ եւանդուն մասնակցութիւն ունէր, 1897 թ.-ին Արք. Անտոնիյ գնաց Անգլիա, ներկայ լինելու թագուհու 60-ամեայ յորելանի հանդիսակատարութիւններին և փառաւոր ընդունելութիւն գաւա: Նա մեկն է այն շարժման պարագլուխներից, որոնք ձգտում են Անգլիկան եկեղեցին մօտեցնել Ռուսաց եկեղեցուն, և յայտնի է առհասարակ իրրե ընդարձակ զարգացման լուսաւոր մտքի և լայն հայեացքների տէր անձն: Նա շատ հաճելի տպաւորութիւն է գործում իւր քաղցր ու համեստ արտաքինով: Իսկ իւր առատանուէր բարեգործութիւններով վայելում է ընդհանուրի համակրութեամբ: Ռուսաց աստուածաբանական գրականութեան մէջ պատուաւոր տեղ է բռնում ի միջի այլոց նորա «Քրիստոնէական քարոզի պատմութիւն»

նից, Ահետքներ և հետադասութիւններ գրուած-  
քը՝

— Արմիոյ մտտիկ մի գիւղում փախճանուել է, և մեծ հանդիսով թաղուել քաղաքի ասորոց ս. Աստուածածին եկեղեցում՝ Սինադակի աւագ քահանայի որ առաջ գործակալ էր Երևանեան շրջանի Ռուսաց եկեղեցոյ և 1897 թ.-ին առաջին անգամ իրրև միտնաբար Պարսկաստան ուղարկուեցաւ նեստորական ասորիների մէջ գործելու համար։ Ինչպէս յայտնի է այդ առաքելութիւնն անսպասելի յաջողութիւն ունեցաւ։ բազմաթիւ նեստորականներ Իսնա եպիսկոպոսի առաջնորդութեամբ Ռուսաց եկեղեցու ծոցը մտան և է. Սինադակին նորադարձների հետ անցնալ տարի կրկին Պարսկաստան էր գնացել ընդարձակ ծրագրով։ բայց անակնկալ մահը չնայելով նորա առողջ կազմութեանը և հաղիւ քառասուն տարեկան հասակին՝ խլեց նորան առատ հունձ խոստացող գործունեութեան ասպարիզից։

— Туркест. Вѣдомости անուշով թերթի մի թղթակիցը հաղորդում է թէ ինքը Հնդկաստանում տեսնուել է Թոմասեան քրիստոնեաների արքեպիսկոպոսի հետ և վերջինս ցանկութիւն է յայտնել իւր 15000 հոգուց բաղկացած հօտը միացնել Ռուսաց եկեղեցուն։ Այդ քրիստոնեաները նեթարկուում են Անտիոքի յակորիկ պատրիարքի իրաւասութեանը։ բայց հեռուորութեան պատճառով դժուարութեամբ են կարողանում յարաբերութիւն պահպանել նորա հետ։ Թէպէտ անգլիական իշխանութեան ներքոյ լինելով սոքա դժուար մատչելի են Ռուսաց առաքելութեան համար։ բայց այս խնդրի վերայ սկսել են լուրջ ուշադրութիւն դարձնել, և ի միջի այլոց Моск. Вѣдомости յայտնի թերթը յորդորում է ձեռնամուխ լինել գործին՝ աչքի առաջ ունենալով թէ ինչպէս դիւրութեամբ աստորաքաղաքական հայերը (?!) օրթողքութիւն ընդունեցին։—Церк. Вѣстникը իրաւամբ նկատում է, որ եթէ ամէն անասկ խնդիրների մէջ իրեն հեղինակութիւն համարող մի թերթ այնչափ տգէտ է, որ նեստորականներին հայերի հետ շփութում է, ինչ կարելի է սպասել գործի ուրիշ ղեկավարներից։

— Գեկտ. 6-ին, նորին Պայսերական Մեծութեան անուանակոչութեան օրը, Սան—Ստեփանոյում օրհնեցին Ռուսաց նոր հոյակապ եկեղեցին, որ մի փառաւոր յիշատակարան է 1878 թ.-ին, ռուս—տաճկական պատերազմից յետոյ, այդտեղ կնքուած խաղաղութեան դաշինքի համար։ Այս եկեղեցոյ մէջ ամփոփուած են պատերազմում ընկած սպանների և զինուորների ոսկորները։

— Գեկտ. 1-ին և 15-ին երկու նիստ ունեցաւ Պետերբուրգում Վայրաքաղաքի և շրջակայքի հոգևորականութեան հովուական ժողովը, Առաջին նիստի խորհրդածութեան զլխաւոր խնդիրն

էր արանց և կանանց ապօրինի կենակցութիւնը որ սարսափելի մեծ ծաւալ է ստացել մայրաքաղաքում։ Ժողովին նախագահող է. Գորշտկով աւագ քահանայի և ուսուցչապետի մի քանի դիտողութիւններից յայտնուում էր, որ 1886—95 թ. 21 հազար ծնուածների վերայ միջին թուով զայիս են 8 հազար ապօրինի զաւակներ։ իսկ օրուայ ատենախօս է. Գերնով քահանայ իւր առաջ հարց էր դրել՝ պարզել այդ ահագին զեղծման հիմնական պատճառները և նորա դէմ մարտելու միջոցներ ցոյց տալ։ Թուելով նախ պակի խորհրդի նշանակութիւնը ձգող և նորա օրինական կատարման արգելք եղող մի քանի հանգամանքներ՝ ապօրինի կենակցութեան տարածուելուն նա երկու զլխաւոր պատճառներ էր ցոյց տալիս. ա) տնտեսական դրութիւնը որ շատ անգամ իրօք դժուարացնում և գրեթէ անկարելի է դարձնում ամուսնական կեանքը, բայց այդ դժուարութիւնը մեծ չափով վերացնել կարելի է՝ փարթամութեան և մողայի դէմ քարոզելով ու գործելով. բ) մարդոց անձնասիրութիւնը և ամուսնութեան հետ կապուած հոգսերի ու նեղութիւնների բնօր վերցնելու դժկամակութիւնը՝ մի պատճառ, որ արդէն ոչ մի օրինաւոր հիմք չունի և որը ցրելու համար բոլոր ուժով այդ հոգևոր ծուլութեան դէմ պէտք է մարտեն հոգևոր հովիւները, Այնուհետև Պատուարժան տեսնախօսը ուշադրութիւն հրաւիրեց ներկայ սերունդի բարոյական անկման նպաստող մի շարք երեւոյթների վերայ թէ ինչպէս արհամարհուած է դպրոցական հաստատութիւնների մեծ մասի մէջ է. պատուիրանը, ինչպէս նոյն իսկ շատ ծնողներ իրենք կորստեան են մասնում իրենց սիրասուն զաւակներին՝ այն տարօրինակ մնորութեամբ, թէ պէտք է թող տալ նոցա դոհացնելու իրենց բոլոր յնական ցանկութիւնները։ ինչպիսի ապականիչ աղբեցութիւն է ունենում ամէնքի վերայ դարուս ոգին, որ զուարճութեան ու բաւականութիւնների մէջ է տեսնում կեանքի նպատակը։ ինչպէս ապականիչ է մանաւանդ թատրոնական որոշ ներկայացումների և որոշ տեսակի գրականութեան աղբեցութիւնը և էնի։—Ատենախօսութեան խիստ երկար լինելուն պատճառաւ՝ վիճարանութիւնները յետաձգուեցան հետեւալ նիստին, որ աւելի բազմամտող էր և ուր կրկար խորհրդածութիւններ եղան ամուրի կեանքը ստիպողական դարձնող և օրինաւոր պակը դժուարացնող խոչընդոտները վերացնելու մասին. այլ և որոշուեցաւ մի յանձնաժողով կազմել, որ առանձնապէս զբաղուի այս խնդիրների նկատմամբ ճիշտ ստատիստիքական տեղեկութիւններ ժողովելով։

— Գրիստոսի ծննդեան տօնը ինչպէս միւս եւրոպական երկրներում, այնպէս և Ռուսաստանում առատաձեւ բարեգործութիւնների օր է, Այս առթիւ Պետերբուրգի թերթերից մէկը հարց

է զարթեցնում կրկին մի անգամ, թէ ինչպէս պէտք է ողորմութիւն բաշխել աղքատներին, որպէս զի իւր նպատակին հասնել, Ի նկատի առնելով այն անխուսափելի շարիքը, որ տուած ողորմութիւնների մեծագոյն մասը, փոխանակ չքաւոր ընտանիքների ամենակենսական պիտոյքների համար գործ գրուելու, օղետներում է ծախուում նա առաջարկում է աժանագին ապաստանարաններին, ճաշարաններին և թէյարաններին, 10, 20, 50 թերթիկներից բաղկացած տետրակներ տպել, որոնց իւրաքանչիւր թերթիկը մի անկողնի, մի ճաշի կամ թէյի իրաւունք է տալիս և վաճառ հանել այդ տետրակները մեծ խանութներում: Բարեգործ մարդիկ կզենեն և փողոցում մտրցականներին փոխանակ դրամի՝ թերթիկներ կրաշխեն:—Մի ուրիշ թերթ նկատողութեան է առնում այն հանգամանքը, որ գիւղերում խեղճութիւնը շատ աւելի մեծ է քան քաղաքներում: մանաւանդ վերջին ժամանակս երբ մի քանի տարի շարունակ ամբողջ նահանգներ հունձ չեն ունենում. ուստի նա առաջարկում է բարեգործական հաստատութիւնները քաղաքներից դէպի գիւղերը փոխադրել, որտեղ շատ աւելի մեծ թուով մարդոց օգնել կարելի է, որովհետև գիւղերում ապրուստը եռապատիկ աժան է, և այդպիսի օգնութիւնը մեծապէս կնպաստէ այն ահագին հոսանքի առաջն առնելու, որ մտրացիկ դասին մղում է դէպի քաղաքները: Շատ յարմար է մանաւանդ հիւանդանոցները գիւղեր տանել, որով թէ առողջապահական պահանջներին բաւականութիւն տրուած կլինի և թէ աւելի մեծ կարիք չլցուցած:

ԿԼԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻ

Քանի աւելի տարիներ են բարգուտում Հոռմի քահանայապետի զտաւանալ հասակի վերայ՝ նոյնքան կենդանութիւն և հետաքրքրութիւն է ստանում այն հարցը, թէ ով պէտք է լինի նորա յաջորդը և ինչ ուղղութիւն տայ պապ, աթոռի բազմակողմանի քաղաքականութեան Իտալիայում որի համար այս խնդիրն ամէնից աւելի կարևորութիւն և գրեթէ կենսական նշանակութիւն ունի, արդէն մի քանի նշանաւոր հրապարակախօսներ և հեղինակներ աշխատում են պարզաբանել այն՝ հասարակութեան առաջ, և հող պատրաստել ապագայ ընտրութեանց համար: Այսպէս օր. Գէ Զէզարէ, որ յայտնի է առհասարակ պապականութեան մասին իւր լուրջ և անկողմնակալ գրուածներով՝ քննութեան է առնում առաջիկայ կոնկրետ կազմութիւնը և համեմատելով նախընթացի հետ, Լեոն ԺԳ-ի գործունէութիւնը կշռելով՝ մի շարք ուշաքրաւ եզրակացութիւններ է հանում: Այն կարգիւնալիցի, որոնք Լեոն ԺԳ-ի ընտրութեանը մասնակցել են, այժմ միայն երկուսն են կենդանի (մին 70 և

միւսը 66 տարեկան), այնպէս որ նոր կոնկլավը գրեթէ ամբողջապէս նոր մարդկանցից բաղկացած պէտք է լինի: Լեոն պապի քսանամեայ քահանայապետութեան տարիներում 123 կարգիւնալիցի են վախճանուել (5-ով աւելի քան Պիոս Թ-ի 32 տարուայ իշխանութեան միջոցին) և զոցա թուում գերեզման են իջել ամենալաւերը՝ գրեթէ բոլոր այն պապացուները, որոնք աչքի էին ընկնում իրենց կրօնական ջերմեանդութեամբ: իրենց բարոյական արժանիքներով, կենդանի մնացածների գերակշռող մասը նոր հոսանքի մարդիկ են՝ Լեոն ԺԳ-ի խորամանկ քաղաքականութեան հետևող, քաղաքական ձգտումներ յառաջ տանելու համար ամէն ինչ զոհելու պատրաստ և այդ ի հարկ է լաւ բան չէ խոստանում, Թէև կան կասկած յայտնողներ, թէ մի գուցէ այս անգամ մի օտար երկրացի պապաթոռի վերայ բարձրանայ, բայց Գէ Զէզարէ հաստատուն փաստերի վերայ հիմնուած պնդում է, թէ ոչ այժմ և ոչ մեր տեսութեան շրջանակի մէջ մտնող ապագայում կարող է այդ բաղդը մի ոչ իտալացու փիճակուել: Ներկայումս կարգիւնալիցի ակումբի 54 անդամներից 32 իտալացի են և 22 միայն օտարներ, այնպէս որ՝ ենթադրելով հանդերձ թէ Լեոն պապը դեռ միջոց կունենայ մինչև իւր մահը մի քանի օտար երկրացի կարգիւնալիցիներ ևս աւելացնելու՝ անհամեմատ գերակշռութիւնը միշտ իտալացուց կողմը կմնայ. որովհետև ազգային խտրութիւնը և տարբեր պետութեանց քաղաքականութիւնը թոյլ չեն տայ երբէք, որ այդ օտար երկրացիների կէսն իսկ միանան ու միասորհուրդ լինին. այլ և, մեծ մասամբ անտեղեակ կամ վատ տեղեակ լինելով իտալական լեզուին, մանաւանդ թէ Վատիկանի բարդ ինտրիգներին, նոքա երբէք չեն կարողանայ զօրեղ ազդեցութիւն ձեռք բերել կոնկլավում:

Մի ուրիշ հրապարակախօս՝ Ժ. Բերթէլէ, միշտ Հոռմում նստող այժմեան 22 կարգիւնալիցիներն րաժանում է երեք կուսակցութեանց, առաջինը, որի ղեկավարն է պապի զիւանապետ Ռամպոլան, ցանկանում է ներկայ քաղաքականութեան անփոփոխ շարունակութիւնը. երկրորդը, որ բողոքովն նոր է երևան գալիս, ուրախ կլինէր, եթէ պապն, ամէն քաղաքականութիւն մի կողմ թողած՝ դառնար և լինէր իրօք հոգևոր հովիւ: ինչպէս հին ժամանակն էր, երրորդ կուսակցութիւնը այս երկուսի մէջ տեղն է բռնում, Հոռմից դուրս գտնուող կարգիւնալիցիները թէև կկամենային իտալացի պապ ընտրել, բայց թոյլ չտալով որ կուրիան (բարձր, եկեղ. վարչութիւնը Հոռմում) իրենց ղեկավարէ, Ռամպոլլայի և նորա կողմնակիցների կանդիտատը համարուում էր մինչև այժմ՝ Միլանի արքեպիսկոպոս Պէրրարին, բայց անցեալ տարի բանտրական խողովութիւնների միջոցին նա այնպէս

ձգեց իւր վարկը որ նորա ընտրութիւնն այլ ևս հարաւոր չէ: Միւս ամենահաւանական թեկնածուներից է Պարոբէնս որ Պիոս Թ-ի ժամանակուայ վերոյիշեալ երկու կարգիւններից աւելի երիտասարդն է՝ դէկան և կամիլիկոյ միանգամայն այսինքն պապի մահից յետոյ նորա տթոռի տեղապահը և ընտրութեանց ղեկավարողը. սորա համար ձայն կտան բոլոր նորա որոնք հակառակ են պապի հաշտուելուն Վտալիոյ թագաւորութեան հետ թէպէտ նա այնչափ ծայրահեղ չէ, ինչպէս այդ կուսակցութեան պատկանողներից շատերը. սպա համարուում է թեկնածու Վանուտէլլին՝ Ռամպոլլայի հակառակորդը. Պարմելիտեան կարգի ղեկներալ Քոտինս իրեն հակառակորդ ծայրայեղ քաղաքականութեան և վերջապէս Վենետիկի պատրիարք Սարտուն որ ամէնից աւելի հաճելի է Հռոմից դուրս եղող կարգիւններին և ամէնից աւելի մատչելի հաշտութեան քաղաքականութեան:

— Պապը մի տոր կենդակով հրամայել է քննել և բարեփոխել նշանաւոր Երգելեալ գրքերի ցուցակին՝ վերաբերեալ կանոնները. Այդ կանոնները մինչև այժմ այնպիսի տարօրինակ խմբադրութիւն են ունեցել, որ ոչ որ չէր կարող պարզ որոշել թէ ինչ տեսակի գրքեր խկապէս մնասակար և բարեպաշտ ժողովրդեան մոլորեղևող պէտք է համարուին: Քիչ չեն եղել այնպիսի ծիծաղելի թիւրիմացութիւններ, որ օր այժմեան պապի մի գրուածքն այդ ցուցակի մէջ է մտել իսկ Զուլայի յայտնի Լուրդր ոչ միայն սկզբում չի բանագրուել, այլ յանձնարարուել է սոսանձնապէս իրեն շահաւէտ ընթերցանութեան զիրք:

— Աւստրիայում քանի զնում մեծանում է Գերմանական տարրի մէջ հակապապական շարժումը: Ե՛րբաց Հոռովից — ազգակուծ են ամէն տեղ կուսակցական ժողովներում — որ քաջալերում է սրտաններին և քանդում գերմանական ազգայնութեան հիմքը. Հոռով. եկեղեցւոյ ձոցից ելնողները միանում են մեծ մասամբ հին կաթոլիկներին և սրբաւ որ մինչև այժմ ազգաբնակութեան ամենաչնչին սոկոսն էին կազմում, սկսել են արդէն աչքի ընկնող տեղ բունել և ազգեցութիւն ձեռք բերել: Սակայն պակաս չեն և այնպիսի կաթոլիկներ, որոնք իրենց եկեղեցին թողնելուց յետոյ աւելի լաւ են համարում կէս ճանապարհի վերայ չկանգնել և ուղղակի բողոքականութեան զիրկն են դիմում:

— Պուլլայում ժողովուած Պրուսիայի կաթոլիկ եպիսկոպոսները՝ Վիլհելմ կայսեր կողմից կաթոլիկներին Երուսաղէմում ստացած պարգևի համար, շնորհակալութեան ուղերձ են ուղղել նորան, ուր ի միջի այլոց սասած է. «Պրուսիայի կաթոլիկները լի վստահութեամբ բարձրացնում են իրենց աչքերը դէպի իրենց Օգոստոսիա Վեհա-

պետը, լաւ իմանալով որ նորա արգարամտութիւնն ու գաղափարական ձգտումները ապահովում են ընդ միշտ իրենց կրօնական և քաղաքացիական շահերը. և նորա յայտնում են դորա համար իրենց շնորհակալութիւնը Զերդ Մեծութեան՝ ո՛չ միայն Զեր Վեհապանն անձի հետ կապող ամենաջրմուռանդ սիրով, այլ և հաւատարիմ աշխատակցութեամբ՝ ի բարօրութիւն պետութեան և ի պատիւ ու ի մեծութիւն մեր երկրի: Նոյնպիսի ուղերձներ Պայսրը ստացել է կաթոլիկ ուսանողների միութեան և այլ գերմ. կաթոլիկ ընկերութիւնների և հաստատութիւնների կողմից:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՆԵՐ  
Փերմսիլա.

Վիլհելմ կայսեր ուխտագնացութիւնը շարունակում է ղեռ յուզել մտքերը Փերմանիայում: Պարեւոր դէպքերի մասին նորանոր ստորոգ տեղեկութիւններ ստացուեցան, նոցանից իւրաքանչիւրը մամուլի մէջ յեղեղուեցաւ և կամաց կամաց սկսան որոշ գաղափար կազմել այդ ճանապարհորդութեան միտթարական ու շահաւէտ և մուլ ու պակաս պատուարեր կողմերի մասին: Ըստ հետաքրքրական է անշուշտ լսել, թէ ինչ տպաւորութիւն է տարել ինքը կայսրը Երուսաղէմից. այս մասին նա խօսել է Բեթղեհէմում այնտեղ ժողովուած արեւելքում գործող 10 բողոքական պատարների ներկայութեամբ, և ասել է ի միջի այլոց. «Պէտք է խոստովանեմ որ ես չափազանց հիասթափուած եմ այն ամէնից, ինչ որ տեսել եմ մինչև այժմ ս. Երկրում, մանաւանդ թէ Երուսաղէմում: Պարող եմ միայն կրկնել. Ես չափազանց հիասթափուած եմ:» Ար Երուսաղէմը սպասած տպաւորութիւնը չէ թողնում՝ այդ բացառում է նա մասամբ նորանով որ քաղաքի մուտքը շատ անյաջող տեղից է. բայց զլիաւորն այն է, որ բնորդ զժուարանում է հաւատալ թէ ինչ են գարծրել քրիստոնեաներն այդ տեղը, որ Երաքի սէրն ամենաբարձր արտայայտութիւնն է գտել — իրենց փոխադարձ թշնամութիւնով իրենց անկարգ ընթացքով, որ ձգում է այս սուրբ տեղի արժէքը և նսեմացնում քրիստոնէութիւնը մահմեդական աշխարհի աչքի առաջ: Այնուհետե կայսրը յիշեցնելով թէ գերմանական քաղաքականութիւնը ինչ յաջող վիճակի մէջ է այժմ Տաճկաստանում, յորդորում է կարողութեան չափով օգուտ քաղել այդ վ. ճակից: Միւս դաւանութիւնները Տաճկաստանում իրենց վարիչ հիմնովին կորցրել են, ինչպէս ես աչքով տեսածից եղբակացնում եմ: այժմ կարգը մերն է: Աչ թէ բունի հաւատարսութեան միջոցներով ո՛չ թէ դաւանարանական քարոզներով, այլ կեանքի մէջ ձեր բունած զիր-

քով ձեր ընթացքով պէտք է զօր կարողանաք մահ-  
մեղական աշխարհին համոզել որ մենք քրիստո-  
նեաներս աւետարանն ունենալով՝ աւելի հարուստ  
ենք և բազումք քան նոքա որ մենք աւետարա-  
նի միջոցաւ ուրիշ մարդիկ ենք զարձելու։— Յիրաւի  
չառ բողոքականներ պատրաստ են մոռանալու կա-  
մաց կամաց կայսեր ուխտադնացութիւնից ստացած  
անախորժ տպաւորութիւններն այն յուսով որ հե-  
տեանքը պէտք է լինի աւետարանական քարոզու-  
թեան բարգաւաճումն արեւելքում։

— Լրագրութեան մէջ զանազան ազդեցիկ  
անձանց կողմից բազմաթիւ յարձակումներ կրեց  
Ռուսոսի անցեալ համարում յիշած նաուամանի յո-  
գուածը հայերի դէմ։ Ենքը նաուամանի Christliche  
welt-ի մէջ աշխատում է իւր վարմունքն արդա-  
բացնել նորանով որ հայերի կոտորածն ինչքան  
և սոսկալի ու զղուելի լինէր՝ տաճիկների համար  
անձնապաշտութեան անհրաժեշտ միջոց էր. իսկ  
տաճիկների հետ ունեցած բարեկամութեան նկատ-  
մամբ՝ Գերմանացոց առաջին պարտքն է իրենց  
հայրենիքի քաղաքականութիւնը պաշտպանել։ Այդ-  
պիսի եսական հայեցողութեան դէմ շատերն արդար  
զայրոյթ յայտնեցին։ Նոյն Chr. Welt-ի մէջ ետեւ  
ետեւ երեք յոգուած է նուիրել հայերին Պ. Բոր-  
րախ որոնց առաջինի մէջ յիշում է С. Петерб.  
Вѣдомости թերթի մի յոգուածը և ասում է որ  
օտարներն իրաւունք ունին դատապարտելու գերմա-  
նացոց բարեկամութիւնը տաճիկաց հետ և մասնա-  
ւորապէս Ալիշէլը՝ կայսեր ճանապարհորդութեան  
երկու կէտը՝ մէկ Գամակոսի ճառը և մէկ էլ կայ-  
սրուհոյ պաշտօնական այցելութիւնը Սուլթանի հա-  
րեմում։ որով նա մահմեդական իշխանաւորի հա-  
ճոյքի առարկաներին մի քրիստոնէայ ղշխոյի հա-  
ւասարապատիւ կին է ճանաչում։ Երկրորդ յո-  
գուածում նա նկարագրում է իւր Հայաստանում  
աչքով տեսած թշուառութիւնները և հրաւիրում  
է ջերմ խօսքերով չզգաբարել օգնելու հայերին՝  
համոզուած լինելով որ «Հայերն արեւելքում իրենց  
քրիստոնէայ անուանող ժողովուրդների մէջ միակն  
են որից՝ քրիստոնէայ արեւմուտքի օգնութեամբ  
և կրթիչ գործակցութեամբ որոշ ժամանակա-  
միջոցում մի կրօք քաղաքակիրթ ժողովուրդի մի  
անկախ կենսունակ ազգ յառաջ գալ կարող է որ  
արժանի է գոյութեան՝ այն նա և ընգուենակ մի  
մեծ կոչումն կատարելու այնտեղ ուր նախախնա-  
մութիւնն իրեն զրկել է։ Երրորդ յոգուածը մի  
ազգու բողոք է նաուամանի դէմ որով պարզում  
է նա այն հայեցակէտը թէ եթէ հարիւր հազա-  
րաւոր մարդոց կոտորածը ինչ ինչ քաղաքական տե-  
սութիւններով արդարացնել կարելի է՝ այն-ժամա-  
նակ ոչ մի ահաւելի գործ չի մնայ պատմութեան  
մէջ որ չարդարանար։ Այս վերջին յոգուածին  
կից յառաջ է բերուած նաև Հեգել անունով մի

յայտնի բժշկի գրութիւնը որ ամբողջ տարի եղել  
է Հայաստանում և շատ օրինակներ է բերում թէ  
ինչպէս նոյն իսկ իրենք՝ զանազան կարգի և աստի-  
ճանի թուրքեր ստեղծում ու զոգուանք են յայտ-  
նում եղած անխաւառութեանց դէմ։ Ինչպէս խնդը-  
րում էին իրեն որ լսածն ու տեսածը չպատմէ Եւ-  
րոպայում թէ չէ թուրքերին փայրենի դազաններ  
և բարբարոսներ կհամարեն այնտեղ մինչդեռ ինքը  
կարծում էր ամբողջ մտածելով որ իւր հայրե-  
նիքում ընդհակառակն թուրքերին սուպետ են ա-  
նուանում և նոցա արածները՝ սիրագործութիւն-  
ներ ինչպէս նոյն իսկ գերմանացի վաճառականնե-  
րը դժգոհ են որ հայերի կոտորածով ծածկաստա-  
նի վաճառականութիւնը շատ ընկել է և ինչ նոյն-  
պիսի յոգուածներ լլոյս են տեսել նաև R. Bote,  
Tgl. Rundschau և այլ մեծ օրաթերթների մէջ։ Նոյն  
իսկ նաուամանի Hilfe թերթը տպագրեց մի քանի  
հայերին պաշտպանող յոգուածներ վերջապէս մեզ  
ուղարկել են նաև մի պաշտպանողական յոգուած  
որ տպուած է Handels-Akademie թերթի մէջ և հե-  
ղինակն է երիտասարդ հայազէտ Բուրխարդի։

— «Բողոքական կրօնաւորութիւն» վերնագրով  
մի փոքրիկ գրուածք է լոյս տեսել վերջերս որ  
ներկայացնում է գերմանական կեանքի մի նոր շատ  
հետաքրքրական երևոյթ։ Հեղինակը մի երիտասարդ  
աստուածաբան է որ հասարակական կեանքի մէջ  
տիրող զանազան շարժումների դէմ կոռուելու համար  
իրրև գօրեղ միջոց առաջարկում է բողոքական կրօ-  
նաւորների մի նոր կարգ հաստատել։ Այդ կրօնա-  
ւորներն ի հարկ է կաթողիկ կրօնաւորների նման  
չպէտք է լինեն վաներում չպէտք է նստեն և  
հանգիստ կեանք վարեն այլ երկու երկու մտնեն  
գործաւոր դասի մէջ և աշխատեն իրրև հասարակ  
բանաւորներ այն ես ոչ թէ մի ամիս երկու ամիս  
կամ մի քանի տարիներ այլ ամբողջ կեանքի ըն-  
թացքում այդտեղ պէտք է կարողանան նոքա իրենց  
առաքինի ճշմարիտ քրիստոնէական կեանքով ազ-  
դել շրջապատողների վերայ և «յաղթել աշխարհին»։  
Մեր արդէն միայնամիտ յիշած «աւետարանացման»  
չարժումից այս կրօնաւորութիւնը նորանով պէտք  
է տարբերուի որ մինչ այնտեղ յաճախ տեղեւ րա-  
նուորներն իրենց գործը թողած զիւր ու քաղաք  
են պտտում ու խօսքով քարոզիչ հանդիսանում  
այստեղ ընդհակառակն գիտուն քարոզիչներ հա-  
սարակ բանաւորներ են դառնում և գործով բարո-  
ղում։ Պէտք է նկատել նաև որ այս կրօնաւորներն  
իրրև բողոքականներ իրաւունք պէտք է ունենան  
հարկաւ ամուսնական կեանք վարելու։— Մի քանի  
յայտնի և լուրջ թերթեր ու շաղրութեամբ և համա-  
կրութեամբ վերաբերուեցան դէպի երիտասարդ կրօ-  
նաւորի զազափարական առաջարկը թէպէտ կաս-  
կած են յայտնում որ նա իրագործել կարողանայ  
այն Սակայն նա ապրում է այնպիսի մի երկրում


(իւր ժողովուրդի բարեպաշտութեամբ և անձնազոհ աշխատասիրութեամբ յայտնի Վ. իւրտեմբերգում), որ դժուար չէ հաւատալ թէ կ'յաջողի գաղափարակիցներէ գոնէ մի փոքրիկ խումբ կազմել:

Անխրիկս.

Միացեալ Նահանգներում, որտեղ ինչպէս ուրիշ անգամ յիշեցրել ենք, եկեղեցւոյ բաժանումը պետութիւնից, փոխանակ շատերի կարծիքով նորա անկման նպատակու է ընդհակառակն պատճառ է եղել կրօնական ամենաջերմեռանդ կեանքի դարգանալուն՝ մի շատ գեղեցիկ սովորութիւն կայ—այն որ տարին մի անգամ, նոյեմբերի վերջին կիրակէ օրը, հանրապետութեան նախագահը հրաւեր է կարգում բոլոր ազգին՝ ընդհանուր գոհացողական մաղթանք մատուցանել առ Աստուած, տարուայ միջոցին ընդունած բոլոր բարիքների համար: Այս տարուայ հրաւերն ասում էր միջի այլոց. «Մեր պատմութեան մէջ քիչ տարիներ կան որոնք այնչափ պատճառ տային շնորհակալութեան, որչափ այս տարին: Երկինքը մեզ առատ հունձ պարգևեց, մեր արդիւնարներու թիւնն ու վաճառականութիւնը հրաշալի ընդարձակութիւն ստացան, մեր հրապարակային վարկը բարձրացաւ և ամրացաւ, մեր ընդհանուր երկրի բոլոր մասերը միացան և աւելի սերտ կապերով կապուած մանակցեցին համազգային ձգտումներին: Հորիզոնն առ ժամանակ մթնացաւ պատերազմի ամպերով, բայց որովհետև մենք ստիպուած էինք սուր բարձրացնել յանուն մարդասիրական գործի՝ պարտաւոր ենք ուրախ լինել, որ ընդհանուր մեզ տեական շեղաւ և այն կորուստները, որ մենք ողբացինք, որչափ և ցաւալի լինէին և աչքի ընկնող, այնքան փոքր են ձեռք բերած արդիւնքների հետ բաղդատելով, որ պէտք է թեւազրին մեզ միայն շնորհակալ լինել և փառաւորել Ձօրու թեանց Տիրոջ:

Նախագահի այս հայեացքը պատերազմի մասին, որով վերջինս իրրեւ սուրբ գործի համար յանձն առած մի անհրաժեշտ շարք է նկատուում սկզբից և եթ մի այն առաջնորդող տեսակէտն էր որ կարողացաւ հաշտեցնել ամերիկական ժողովուրդի լուսազոյն մասի խիղճը նորա արհաւիրքների հետ և ոգևորել նորա համար, եկեղեցական դասն ևս շատ աշխատեց այդ հայեցակէտը պաշտպանել իւր քարոզների մէջ և պարզարանել քրիստոնէական սկզբունքներով: Այդպէս՝ եպիսկոպոսներից մէկը իւր մի նշանաւոր ատենախօսութեամբ, ամենայն յարգանք մատուցանելով հանդերձ Ռուսաց Ամենօրման Պայտեր զինամիութեան մարդասիրական հրաւերին և խաղաղութիւնը գրուատելով՝ հաստատում է այնուամենայնիւ որ ներկայ կեանքում լինում են դէպքեր, երբ պատերազմը անխուսափելի է դառնում. այդտեղ քրիստոնէութիւնը

փոխանակ բացէրաց մերժելու և դատապարտելու այն, պէտք է շխտաւ ըստ կարելւոյն նորա աղետները մեղմացնել, ինչպէս և եղաւ այս վերջին պատերազմի ժամանակ—Յիրաւի ամերիկական զանազան քրիստոնէայ ընկերութիւններն այնպիսի օրինակելի գործունէութիւն ցոյց տուին այս պատերազմի միջոցին և տեղի ունեցան քրիստոնէական եղբայրսիրութեան այնպիսի սրտաշարժ դէպքեր՝ ինչպէս օր. թիւամուսորտակուող նաւի զինուորներին սեփական կեանքի վտանգով ազատելը և ընդ որ աւետարանի յաղթանակը մարդկային կեանքի նաև այս սոսկալի չարիքի վերայ ակներև էր: «Արմիթ խաչի» ընկերութեան անդամներն ամբողջ գնաւորով շրջում էին բանակի հետ և անխոր օգնում թէ հայրենակիցներին և թէ թշնամիներին: «Չափաւորութեան ընկերութիւնը» յաջողեցաւ ցոյց տալ, որ ոգելից ըմպելիների գործածութիւնն ամենին անհրաժեշտ չէ պատերազմում, որ կարելի է առանց գործան օրինակելի ողջախոթիւն և կարգապահութիւն պահպանել զօրքի մէջ և ընդ:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Մասին սովորութեան համաձայն Մայր Աթոռի միաբանութիւնը կազանդի երեկոյան սեղանատուն հաւաքուեցաւ միասին գիմաւորելու տարիվերջին: Սեղանատան աջ և ձախ կողմից միաբանական շարքի զլուսը բաղմած էին Գերապատիւ Տեառք Սարգիս և Սուքիաս արքեպիսկոպոսները: Մեծաւորաց հրամանով տօնի մասին խօսեց Արժ. Դարեգին վարդապետ Եովսեփեանը: Ապա Ա. հաստառ Հայրապետի կենացն առաջարկեց Տ. Սարգիս արքեպիսկոպոսը՝ գրուատելով Նորին Ս. Օծութեան տոնուցութիւնն ու անխոնջ հոգածութիւնը իւր հօտի մասին: Իսկ գերապատիւ Սուքիաս Սրբազանը առաջարկեց Տ. Սարգիս արքեպիսկոպոսի, որպէս Ա. հաստառ Հայրապետի փոխարէն միաբանական ուխտի առաջնորդի կենացը և ապա բարեմաղթութիւններ արաւ Մայր Աթոռի յարատեւութեան, Միաբանութեան և ժողովրդի բարօրութեան համար: Ընթրիքից յետոյ միաբանները մի առ մի